

ԿՐԻԿՈՐ ԱՐՄԵՐՈՒՆՈՒ «ՄՇԱԿԸ» ԵՎ ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ (1872—1892)

Լ. Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

1872 թ. հայ մամուլի անդաստանը մտավ մի նոր պարբերական, որ եկել էր ակոսելու հայ հասարակական կյանքը՝ իբրև մտավոր մշակ, Եվրոպայում կրթված երիտասարդ խմբագիր-հրատարակիչ Գրիգոր Արծրունին իր «Մշակ» թերթի հրատարակության մեջ իսկական հեղաբեկում առաջ բերեց հայ մտավոր կյանքում: Նա հպարտության մեջ հայտարարում էր, որ պայքարի երկու զենք է ընտրել՝ մտրակն ու քլունգը: Եվ իրոք, մոտ երկու տասնամյակ անխոնջ, անընկճելի խմբագիրը, իր շուրջը հավաքած տաղանդավոր հրապարակախոսների մի փաղանգ՝ Բաճեֆի, Ա. Արփիարյան, Մ. Փորթուզալյան, Ն. Աբելյան, Լեո և ուրիշներ, մտրակում-հալածում և արմատահան է անում այն հնացած հաստատություններն ու կաշկանդիչ կապանքները, որոնք խանգարում էին հայ ժողովրդի ազգային զարթոնքին: Դա հայ հասարակության զարգացման բուրժուական վերելքի շրջանն էր, երբ արմատական ազատամտականությունն իր առաջադիմական դերն էր կատարում, պայքարելով ֆեոդալիզմի մնացորդների դեմ և ճանապարհ հարթելով կապիտալիզմի զարգացման համար:

Առաջին տասնամյակում «Մշակի» հրապարակախոսությունը համարյա անաբեղ ճանապարհ էր հարթում: Գրաքննական սակավ միջամտությունները, չէին խաթարում թերթի դիմագիծը: Սակայն ընդունված է ասել, որ 80-ական թվականների երկրորդ կեսից, այսինքն՝ վերսահրատարակաճից հետո «Մշակը» կորցրել էր իր քաղաքական սրությունը, տուրք տալով զգուշավոր, չափավոր լիբերալիզմին: Ծանոթանալով գրաքննության մերժած նյութերին, պարզվում է, որ դրա պատճառը ոչ այնքան արմատական դիրքերի գիշումն էր խմբագրի կողմից, որքան 80-ական թվականների սկզբից սաստկացած գրաքննական ռեժիմը, որն իր հերթին արդյունք էր ռեակցիայի զորանալուն: Դժվար չէ հասկանալ նաև, որ այդ ռեժիմը ոչ միայն «վտանգավոր» հոդվածները բռնագրավման էր դատապարտում, այլև կանխապես, հեռակա ձևով ներազդում հեղինակների, խմբագրի վրա, նրանց մղելով «ընդունելի» ձև տալ նյութերին, զսպել քննադատական կիրքը, մտնել չափավոր շրջանակների մեջ՝ թերթի գոյությունը պահպանելու համար:

70-ական թվականներին «Մշակը» աղատ շարադրում էր իր քաղաքական ծրագրերը, քննադատում Հայկական հարցի տարրեր կողմերը, ընդհուպ Արևմտյան Հայաստանը զինված պայքարով ազատագրելու խնդիրը: Մինչդեռ 80-ական թվականների փոխված իրադրության պայմաններում, երբ ցարական կառավարության քաղաքական կուրսի մեջ աննպաստ փոփոխություն մտավ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ, մարտական լեզու թերթը ստիպված էր տեղի տալ: Ալեքսանդր II-ի սպանությունից հետո (1881) Ալեքսանդր III-ի գահակալությունը թագավորների սոսկական հաջորդափոխություն չէր. այն քաղաքական կլիմայի կտրուկ փոփոխություն բերեց իր հետ, որն իր ցայտուն արտահայտությունը գտավ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականության բնագավառում: Փոքր ազգերի ազատագրական շարժումներին նպաստող ռուսական արևելյան քաղաքականությունը տեղի տվեց բարեկամ Թուրքիային շնեղացնելու զգուշավորության առջև: Ռուս-թուրքական պատերազմով ոգեկոչված և իրենց բնականոն զարգացումն ապրող հայկական շարժումները այժմ ընկան «հայկական սեպարատիզմ» պիտակի տակ: Դեռևս նախանշանի շրջանում մեջտեղ հանված «Երիտասարդ Հայաստան» առասպելը նորից շրջանառու-

թվան մեջ դրվեց գաղտնի գրագրությունների մեջ: Խափանվեց հայկական դպրոցների աշխույժը՝ նրանց դռներին փականք կախելով, սահմանափակվեց ազգային-մշակութային հիմնարկների գործունեությունը: Յարիզմի վարած ռուսացման քաղաքականությունը իր ծանր հետևանքները բերեց: Մոսկվա ղեկավարի տասնամյակը ավերածություններ գործեց նաև մամուլի բնագավառում: Կովկասյան փոխարքայությունը կառավարչապետության փոխվելու և երկրամասի կառավարման նոր համակարգի հետ գործի դրվեց և դրաբնական նոր կանոնադրությունը (1882): Գրաքննական խստությունները սաստկացնելու վերաբերյալ կառավարչապետ Դոնդուկով-Կորսակովի մտադրությունը ներքին գործոց մինիստրի հրահանգի կերպարանք առած եկավ ուժեղացնելու գրաքննիչների զգոնությունն ու իրավունքները, որոնց կարմիր մատիտը ոչ միայն առանձին տողեր ու պարբերություններ, այլև ամբողջական հոդվածներ դարձրեց գրաքննական մամուլի ճարակ: Նշենք, որ «Մշակը» հաջորդաբար գրաքննության են ենթարկել ավագ գրաքննիչներ Ս. Մելիք-Մեհրաբովը, Մելիք Նուբարովը, Ալեքսանդր Քիշմիշևը և կոտսեր գրաքննիչ Գ. Կարախանովը:

Կարելի է պնդել, որ նախորդ շրջանում վաստակած քաղաքական բարեհուսության շնորհիվ «Մշակը» ավելի պակաս ենթարկվեց գրաքննական ավերածության, սակայն ռեժիմը զնալով անվերապահ էր դառնում, առանց բացառության աղավաղելով բոլոր պարբերականների դիմագիծը: 1883 թ. «Մշակը» խմբագրությունը խուզարկության ենթարկվելու և Արթուրուն ու Բաֆֆուն ոստիկանական հսկողության տակ առնելու փաստը, հասկանալի է, չէր կարող անհետևանք մնալ: Նյութական պատճառներով թերթի մեկուկես տարվա դադարումը գուցե խափանեց նաև այլ «անակնկալներ»:

«Մշակի» վերահրատարակությունը (1886 թ.) չէր կարող ապահովել խմբագրի լավատեսությունը՝ պահպանել թերթի նախկին արմատական ուղղությունը և քննադատական ոգին: Թերթի էջերից ամենից շատ հալածվեց Հայկական հարցը. արևմտահայության դատի պաշտպանի լեզվին կապանք դրվեց: Եթե թերթի համարները՝ Հայկական հարցին նվիրված Արթուրուն առաջնորդողներով ռուս-թուրքական պատերազմի տարիներին ձեռքից ձեռք էին անցնում, ապա այժմ Հայկական հարցը բառերի հոլովումն իսկ բավական էր, որպեսզի հոգվածը մեկ օղակից՝ գրաքննչի ամենազոր ձեռքից, այն կողմ լանցներ: Այդ բախտին են արժանանում արևմտահայ թղթակիցների նամակները, մանավանդ Հայկակի (Ա. Արփիարյան) անզուգական թղթակցությունները, որոնք քանի տարի զարդարում էին «Մշակի» էջերը: Մերժվում են նույնիսկ արտաստությունները արևմտահայ թերթերից:

1896 թ. սեպտեմբերին գրած ընդարձակ հոդվածում Հայկակը հայանում է, որ Կ. Պոլսի լրագրերը «այլևս իրավունք չունեն Արմենիա կամ Հայաստան բառը գործածելու, այլ գործ են ածում հետևյալ ծիծաղելի պարբերությունը այդ իրերի փոխարեն»։ «Հայ կրոնով օսմանցիներից բնակեցված երկիր»²: Արփիարյանի հոդվածի մերժումը ապացույց չէ՝ այն բանի, որ այդ բառերը վախեցնում էին ոչ միայն թուրքական, այլև ցարական իշխանություններին...

Ռուսական զենքի օգնությամբ ազատություն նվաճած բալկանյան ժողովուրդների կյանքի լուսաբանումը, որ «Մշակի» համար տարիներ շարուն-

¹ Այս մասին մանրամասն տե՛ս С. Г. Арешян, Армянская печать и царская цензура, Ереван, 1957, Մ. Միսիթարյան, էջեր արևելահայ պարբերական մամուլի գրաքննության պատմությունից (էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության, Երևան, 1971, էջ 254—297), և ու է ի՝ Գովհասի գրաքննական հոմիտեի նյութերից (Գաղտնի-բանասիրական հանդես, 1974, № 3, էջ 105—112): Շնորհակալություն ենք հայանում Մ. Միսիթարյանին՝ գրաքննության արխիվի «Մշակի» նյութերի միկրոֆապավենները (Թբիլիսի) մեզ տրամադրելու համար:

² Վրացական ԽՍՀ Պետական պատմական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՎԽՍՀ ՊՊԿ), ֆ. 480, գ. 712:

նակ հալ ժողովրդի քաղաքական արթնացման միջոց էր, նույնպես գրաքննությունն ամենակուլ արխիվների բաժին էր դառնում: Ահա մի հոգված՝ նվիրված օսմանյան լծի դեմ հույն ժողովրդի պայքարին. այնտեղ կարդում ենք. «Այդ անիրավ բռնությունը ծնեցրեց հույն ժողովրդյան մեջ մի զորեղ ատելություն դեպի այն բոլորը, ինչ որ տաճկական էր և այդ ատելությանը հետևեց ազատության գաղափարը»³: Մեկ ուրիշ՝ «Բուլգարիայի ապագան» հոգվածի միտքն այն է, որ բուլղարացին իրավունք ունի ուրախ դեմքով նայելու իր հայրենիքի ապագային, որովհետև նա գիտե արյուն թափել նրա համար⁴:

Մերժվել են Արծրունու բազմաթիվ առաջնորդողներ և արտաքին տեսություններ՝ նվիրված արևմտահայության ճակատագրին, թեև դրանք գրված են անհամեմատ մեղմ տոնով, քան այն հոգվածները, որոնք ռուս-թուրքական պատերազմի տարիներին ուղղակի շիկացնում էին. հասարակական մթնոլորտը, Արգելվում էր հավաստել այն հանրահայտ իրողությունը, որ արևմտահայ գյուղացու կյանքը անապահով է, կամայականությանը և բռնությանը ենթակա, որ նա «աշխատում է, արդյունաբերում է, սակայն միշտ աղքատ է մնում, երկրում շատ անգամ սով է տիրում և աղքատությունից ստիպված ժողովուրդը անդադար գաղթել է իր բնական երկրից...»⁵: Նույնիսկ վտանգավոր է դիտվում Արևելյան խնդրին նվիրված որևէ հոգված, թեկուզ այնտեղ առաջ քաշվեր Թուրքիան քաղաքակրթելու և խաղաղ ճանապարհով Արևելյան կնճռոտ խնդիրը լուծելու որևէ տեսակետ⁶ կամ այնպիսի հարցադրում, թե թուրքը ընկճվում է միայն ֆիզիկական ուժից, զենքից, բայց նրան պետք է ծնկի բերել նաև մտավոր ուժով: Կովկասի գրաքննությունն կոմիտեի նախագահի մի գաղտնի գրության մեջ ուղղակի ասված է. «Գրաքննության կոմիտեն, ընդունելով ի անշեղ ղեկավարություն պ. կառավարչապետի առաջարկը, իր որոշմամբ տեղական մամուլի քննարկումից հանել է այսպես կոչված Հայկական հարցը...»⁷: Ուրեմն, եթե կար վերին հրամանը ու նաև կոմիտեի որոշումը, գրաքննիչներին մնում էր այն ի կատար ածել...

Կարողալով մերժված շարվածքները, իսկույն երևում է այն սևեռուն ուշադրությունը, որին արժանացել են սոցիալական խնդիրը շոշափող նյութերը: Մի ընդարձակ տեսություն, օրինակ, ամփոփում է Անդրկովկասում բուրժուական ռեֆորմների նշանակությունը տեղական ժողովուրդների համար: Հոգվածը հանգում է աներկմիտ եզրակացության. ո՛չ գյուղացիական, ո՛չ դատական ռեֆորմները շարդարացրին իրենց վրա դրված հույսերը. ամբողջ համակարգը «տասնհինգ տարու գործունեությունից հետո ցույց տվեց իր բոլոր անկարողությունը»⁸: Այսպիսով, «Մշակը» գրկվում է հնարավորությունից ասելու իր վերջնական կարծիքը մի ռեֆորմի մասին, որի հետ ինքը ևս ժամանակին քիչ հույսեր չէր կապել:

Բռնագրավվում էին ոչ միայն այն նյութերը, որոնք քաղաքական երանգ ունեին, այլև այնպիսիք, որոնք գյուղացու կամ բանվորի վիճակի սոսկական նկարագրություն էին: Թղթակցություններից մեկը, պատմելով գյուղացու հարստահարության մասին, ավարտվում է անխուսափելի հարցադրմամբ. «Այո, անարժան քահանան, վատ տանուտերը, կաշառակեր դատավորը և գյուղացի չարչի աղան ավելի անտանելի են գյուղական ժողովրդի համար՝ քան վնասակար միջատները և երաշտը: Ո՞վ պետք է անմիջապես մտածի:

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 802:

⁵ Նույն տեղում, գ. 869:

⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 1050:

⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 1117:

⁸ С. Г. Арепьян, նշվ. աշխ., էջ 261:

⁹ ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 480, գ. 802:

այդ մասին»¹⁰, Բաթումի բանվորների անտանելի դրության նկարագրությունը նույնպես դիտվել է հրապարակման «ոչ հարմար»։ Ինչ է հայտնում թղթակիցը՝ բանվորներն օրական աշխատում են ավելի քան տասը ժամ, հիվանդանալու դեպքում ղրկվում են իրենց տեղից, ապրում են անտանելի բնակարաններում, զուրկ տաք կերակուրից, բժշկական օգնությունից։ «Գործարանատերերը ամեն քան հանձնել են գործակատարներին, բոլորովին չեն հետաքրքրվում բանվորների դրությամբ, չեն ուղում մտածել, թե այդ բանվորների աշխատանքը գնելով կոպեկներով և ուրիշներով, վաճառում են հազարներով։ Բոլորովին չեն աշխատում իրենց համար աշխատողների դրությունը փոքր-ինչ բարվոքել, չեն ուզում օգտվել ուրիշների փորձից և կարծես սպասում են այն օրին, երբ բանվորները իրենք սկսեն մտածել իրենց դրությունը բարվոքելու մասին»¹¹։ Այս և այլ մերժված հոդվածների մեջ բանվորական խնդիրը ստանում է լեզալ մարքսիզմի ոգով լուծումներ՝ տրեստական պայքարի շրջանակներում։ Առնչվելով միջազգային բանվորական շարժմանը, այդ նյութերը որպես միջազգային սոցիալ-քաղաքական շարժումների հայկական արժարժումներ, օգնում են «Մշակի» քաղաքական դիմագծի մեջ ճշտումներ մտցնելու։

Անստորագիր «Արտաքին տեսությունների» մեծ մասի հեղինակը Արծրունին է, ինչի մասին վկայում են հոդվածների պահպանված ձևագրերը¹²։ Այդ նյութերի նույնիսկ օբյեկտիվ տեղեկատվական բնույթը չի կարողացել ձանապարհ հարթել դեպի տպագրություն։ Գրաքննիչը մերժող մակագրություն է դրել, օրինակ, այն հաղորդագրության վրա, որը տեղեկացնում է, թե մայիսի 1-ին եվրոպական խոշոր կենտրոններում կայանալու է «մի վիթխարի գրգռված միտինգ, որը խոստանում է խաղաղ մնալ, բայց որը գուցե աղմուկ բարձրացնի և զենք վերցնի ատելի բուրժուանների դեմ... բանվորները ձգտում են մոտենալ միմյանց, ձեռք-ձեռքի տված օգնել միմյանց, առանց ազգային և տոհմական խտրության»¹³։

Արծրունին մի առանձին հետաքրքրությամբ էր հետևում Գերմանիայի քաղաքական կյանքին։ Բիսմարկի բացառիկ օրենքը, այսպես կոչված «բանվորական օրենսդրությունը», պառլամենտական ընտրություններում սոցիալիստների հաջողությունները դառնում են հատուկ քննության առարկա, միայն, ցավոք, թերթը հարստացնելու փոխարեն ուժացնում են գրաքննական թղթապանակները։ Մերժված նյութերի մեջ է, օրինակ, Բեռլինի պատասխան հեռագիրը Ֆրանսիայի սոցիալիստների կուսակցությանը՝ աշխատագիր ընտրություններում գերմանական սոցիալիստների հաջողությունը շնորհավորելու առթիվ։ Հեռագրում նշվում է, թե ֆրանսիացի և գերմանացի բանվորները պետք է իմանան, որ իրենց շահերն ընդհանուր են և իրենց միությունը ընդհանուր խաղաղության և ազատության երաշխիք է¹⁴։ Սրան հաջորդում է «Նշանավոր հետևանքներ» հոդվածը, որտեղ մեկնաբանված է ընդդիմադիր կուսակցությունների՝ սոցիալիստների և առաջադիմականների, տարած հաղթանակը 1890 թ. պառլամենտական ընտրություններում։ Բիսմարկի սոցիալական դեմագոգիայի քաղաքականության բոլոր հնարանների բացահայտումը ավելորդ կլիներ ակնկալել հոդվածից։ Հայտնի է, որ Բիսմարկը հրապարակեց բանվորական սոցիալական ապահովագրության օրենքներ, փորձելով պրոլետարական շարժումը և զարգացող սոցիալիզմը հակակշռել «պետական սոցիալիզմով»։ Արծրունու համակրանքը ոչ թե Բիսմարկի և ոչ էլ սոցիալիստների, այլ «ազատ մտածող» (լիբերալ)

¹⁰ Նույն տեղում, գ. 712։

¹¹ Նույն տեղում, գ. 991։

¹² Տե՛ս ն. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, «Մշակի» արխիվ, գ. № 324—393։

¹³ ՎեՍՂ ՊՊԿԱ, ֆ. 480, գ. 1050։

¹⁴ Նույն տեղում, գ. 991։

առաջադիմականների կողմն է: Նա թյուր կարծիք է զարգացնում այն մասին, որ իրր սոցիալիստները պատրաստ են հաշտվել «անսահման միապետական կառավարչական ձեռն հետ, միայն թե դա համաձայնվեր կոտորել, անդամալույծ անել բուրժուազիայի կապիտալի ուժը», որ իբր նրանց համար միևնույն է՝ սահմանադրական թե՞ միապետական կարգ: «Պետական սոցիալիզմը» բնութագրվում է որպես կառավարության ձեռք մեկնում սոցիալիստներին՝ ազատամիտ և սահմանադրական բուրժուազիայի գլխի վրայով: «Իշխան Բիսմարկը ինչքան էլ հալածեր սոցիալիզմը իր բացառական օրենքներով,—կարդում ենք մերժված հոդվածում,—բայց շատ լավ գիտեր, որ պետական իշխանությունը կարող է օգտվել սոցիալիստների վարդապետությունից, գլուխ կանգնել այդ վարդապետության և ետ մղելով սոցիալիստների ժողովրդական ղեկավարներին՝ պետական ինիցիատիվ իրականացնել սոցիալական ռեֆորմները ամբողջի մեջ, այդպիսով գրավելով ամբողջի համակրությունը դեպի կառավարչական իշխանությունը»¹⁵: «Պետական սոցիալիզմը» սոցիալիստական ուսմունքի հետ նույնացնելը խանգարում է տեսնել պետական քաղաքականության դեմագոգիկ աստառը: Արծրունին խոսել է ծիւղում միայն լիբերալների առջև, որոնց հանրապետական քաղաքական կողմնորոշումը նաև իր կողմնորոշումն է: Նրա կարծիքով Բիսմարկը սրանց մեջ ավելի մեծ վտանգ է տեսնում, քան սոցիալիստներին: Շարունակելով իր քաղաքական մեկնաբանությունը, «Բանվորական հարցը» հոդվածում Արծրունին վկայակոչում է նաև այն կարծիքը, ըստ որի այդ հարցը լուծելու գերմանական կառավարության ձգտման «ուղղակի նպատակն է ջոկել, բաժանել բանվորներին սոցիալիստական կուսակցությունից և այն համոզմունքը մտցնել բանվորների մեջ, որ կառավարությունը թեև հալածում է սոցիալիստներին, բայց պահպանում է բանվորներին»¹⁶: Դժվար չէ նկատել, որ Արծրունին փորձում է շարադրել սոցիալ-դեմոկրատների կարծիքը, որոնք «աշխատանքի և կապիտալի հարաբերության սիստեմում», «արմատական փոփոխություններին» մեջ են միայն տեսնում բանվորական խնդրի լուծման ճանապարհ: Թուուցիկ, մակերեսային է Արծրունու ծանոթությունը սոցիալիզմի ուսմունքին, բայց նույնիսկ այդպիսի մեկնաբանությամբ հոգվածները նկատվել են «վտանգավոր»:

Շարվածքներ, շարվածքներ, խափանված միօրինակ ու անհոգի մակագրությամբ. «Մշակի» քանի՞ համարներ կարելի էր կազմել, լավագույն համարները: Ահա, օրինակ, Վոլկովոյի գերեզմանատանը նվիրված հոդվածը. տապանաքարերին փորագրված նվիրական անունները մղել են անհայտ հեղինակին հուզիչ խորհրդածությունների ոռոս գրականության հսկաների՝ Բեկինսկու, Դոբրոլյուբովի, Պրսարևի, Տուրգենևի, Կավելինի և այլոց մասին: Մերժման դիմաց «Մշակը» մխիթարվելու բան ուներ: Այս նվիրական անունները Արծրունին շատ էր պանծացրել իր թերթի էջերում անամպ օրերին: Ժամանակի ամոթն էր և ոչ թե իր մեղքը, որ այլևս չէր կարելի տալ այն անունները, որոնց շնորհիվ հեղաբեկվել էր ռուսական կյանքը և ասել՝ «ահա այն մարդիկ, որոնց է պարտական մեծ մասամբ 1861 թվականի փետրվարի 19-ի ռուսական պատմության մեջ կատարված ֆենոմենը...»¹⁷: Մերժվել է Ուսպենսկուն նվիրված և. Մալումյանի հոգվածը, որը հաստատում է, թե ժողովրդական գրողը, «ամբողջ կյանքը նվիրեց հայրենի երկրին և ժողովրդին, ամեն տեսակ տանջանքներ կրելով՝ կռիվ մղեց արդարության և ճշմարտության համար»¹⁸:

Հետաքրքրությունից գուրկ չէ այն փաստը, որ Արծրունին գրաքննության հետապնդումներին ենթարկվում է նաև... իր մահից հետո: «Մշակի»

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում, գ. 712:

¹⁸ Նույն տեղում, գ. 1117:

խմբագրի թաղման արարողության ժամանակ, երբ Արծրունու դագաղը իրենց ուսերին առած մշակները թափորը շեղում են «պաշտոնապես» սահմանված ուղուց և այն տանում իրենց որոշած ճանապարհով, շրնկվելով անգամ ոստիկանության հետ ընդհարումից, դրանից զգուշացած (և ոչ միայն այդ պատճառով), իշխանությունները կարգադրում են գրաքննության կոմիտեին՝ չափավոր շրջանակների մեջ դնել ինչպես Արծրունու թաղումը նկարագրող, այնպես էլ նրա անձը դրվատող հոգվածները, մասնավորապես արգելելով այնպիսի ելույթները, որոնք վերաբերում են նրան հայտնի ուղղության ագիտատորի և հայ մտավորականության հայտնի կուսակցության թաքուն գաղափարների կրողի դեր»։ Նույնիսկ Արծրունու գրական գործունեությունը խորհուրդ է տրվում ներկայացնել չափավոր տոնով... առանց կրած կորուստի նշանակությունը առանձնապես գերազնահատելու»¹⁹։ Այս կարգադրությունը ի կատար ածելու ջանքերը մենք տեսնում ենք գրաքննության արխիվի գործերում։ Արծրունու հիշատակին նվիրված համարից դուրս են նետվում Լեոյի և Լ. Սարգրսյանի հոգվածները²⁰։ Իր ուսուցչին ինքնամոռաց ոգևորությամբ ներգողող Լեոյի հոգվածը չի կարելի ասել թե մշտնջենական համրության է դատապարտվում։ Նա դեռ առիթ էր ունենալու մեկ տասնամյակ հետո «Գրիգոր Արծրունի» վերնագրով աշխատության երեք հատորով (Թիֆլիս, 1902—1905) պանծացնելու նշանավոր հրապարակախոսի վաստակը, բյուրեղացնելու իր տպավորություններն ու հիշողությունները, չվախենալով այլևս ագերազնահատության» վտանգից։

Հետաքրքիր է՝ Արծրունին իբրև խմբագիր ի՞նչ համարում ուներ գրաքննության կոմիտեի աշըում։ Հարցին պատասխանելու համար առանձնացնենք երկու փաստաթուղթ. առաջինը գրաքննության կոմիտեի կարծիքն է՝ 1886 թ. «Մշակի» վերահրատարակումը թույլատրելու վերաբերյալ։ Կոմիտեն հավաստիացնում է կառավարչապետին, որ 12 տարվա հրատարակության ընթացքում թերթը չառիթ չի տվել նկատելու նրանում հակակառավարական որևէ ուղղություն կամ վնասակար գաղափարների անցկացում, ընդհակառակը, ոչ սակավ այն հանդես է բերել ընդդիմադրություն տեղական կամ արտասահմանյան այն հայկական օրգաններին, որոնք արտահայտել են մեր կառավարության նկատմամբ որևէ հակակրական միտք կամ դատողություն»²¹։

Հարցի ուղղակի պատասխանն է բովանդակում արխիվի մեկ այլ փաստաթուղթ. դա մի հուշագիր է, որ գրել է գլխավոր գրաքննիչ Ա. Քիշմիշեը Արծրունու մահից հետո, բնութագրելով «Մշակ» թերթի ուղղությունը 20 տարվա հրատարակության ընթացքում։ Չի կարելի անվերապահորեն մեղադրել գրաքննիչին աշուու, նախապաշարված կամ միտումնավոր կարծիքի մեջ։ Իր հուշագրում նա զարմանք հարուցելու չափ օբյեկտիվ է, թեև զգացվում է պաշտոնական մտածողության անխուսափելի կնիքը։ Ի՞նչ է հուշագրում գրաքննիչը. նա անտարակուսելի տաղանդ է տեսնում Արծրունու խմբագրական գործունեության մեջ, որը ընդլայնելով թերթի շրջանակները, ընթերցողին ներկայացրեց ոչ միայն տեղական, այլև ռուսական և եվրոպական կյանքը. «Մշակի» առաջին իսկ համարների առաջնորդող հոգվածների շարքով Գրիգոր Արծրունին ցույց տվեց, որ նա ձգտում է հայերի կյանքի մեջ մտցնել այն սկզբունքները, որ մշակել էին կուլտուրական ժողովուրդները և նպաստել հայերի միավորմանը ռուսների հետ, որոնցից կախված էր նրանց մտավոր, բարոյական և տնտեսական բարեկեցությունը»²²։ Նրա ծա-

¹⁹ ՏՃ՝ Մ. Մխիթարյան, էջեր արևելահայ պարբերական մամուլի գրաքննության պատմությունից, հավելված № 6, էջ 295—296։

²⁰ ՏՃ՝ ՎեՍՇ ՊՊԿԱ, ֆ. 480, գ. 1117։

²¹ Նույն տեղում, № 669։

²² ՏՃ՝ Մ. Գ. Арешян, նշվ. աշխ., էջ 452—454։

ռայությունն է դիտվում «նեղազգայնական տենդենցների» դեմ պայքարելու, կովկասյան ժողովուրդների բարեկամություն քարոզելու: Հոգևորականության դեմ Արծրունու մղած պայքարը գնահատվում է որպես ժամանակակից կյանքի ոգով եկեղեցական վարչությունը ռեֆորմի ենթարկելու և հոգևոր դասի մտավոր ու բարոյական մակարդակը բարձրացնելու մղում: Գրաքննիչը հարկ է համարում նշել, որ, համամարդկային գաղափարների քարոզելով, Արծրունին արևմտահայերի նկատմամբ իր համակրությունները արտահայտում էր միայն այնքանով, որքանով դա թույլատրում էին իր ուղղության լիբերալ ձևերը: Արծրունու բնածին խելքը և հրապարակախոսական տակտը, գրաքննիչի կարծիքով, զսպում էին «Երիտասարդ Հայաստան» կոչված արմատական երիտասարդության ձգտումները, որն աշխատում էր «Մշակը» դարձնել իր նպատակների արտահայտման օրգան: Սակայն 90-ական թվականներին, Արծրունու հրապարակախոսական 25-ամյա գործունեության աննախադեպ մեծարումից հետո, գրաքննիչի կարծիքով, արմատականներին հաջողվում է «Մշակի» անընկճելի խմբագրին ենթարկել իրենց ազդեցությանը և «այդ ժամանակից ի վեր կոսմոպոլիտ «Մշակ» թերթը վերակերպավորվում է ազգային տենդենցների օրգանի»²³:

Այս փաստերի մեջ ցարական պաշտոնյան տեսնում է հեռացում նախկին կառավարաշահ գաղափարների քարոզից դեպի արմատական երիտասարդությունը, որի լեզվով գործունեությունը Արծրունու մահով այլևս ընդհատված է դիտվում: Այս փաստաթուղթը մի ավելորդ անգամ ցուցադրում է «Երիտասարդ Հայաստանի» չհեռացող ուրվականի հետ կապված պաշտոնական շրջանների մտավախությունները, «հերթապահ» մեղադրանքի անհեթեթությունը հետ հաստատելով իշխանությունների քաղաքական հետեվողականությունը:

«Մշակի» նկատմամբ կովկասյան իշխանությունների այլևս զգուշավոր քաղաքականությունը հատկապես դրսևորվեց Արծրունու մահից հետո նոր խմբագրի ընտրության հարցում: Նախ մերժվեց Հ. Տեր-Մարկոսյանին ժամանակավոր խմբագիր նշանակելու վերաբերյալ խնդրքը: Եթե 1889, 1890, 1892 թթ. Արծրունու մերձավորագույն օգնականը նրա բացակայության ժամանակ մամուլի գործերի գլխավոր վարչության բարեհաճ թույլտվությամբ²⁴ անարգել փոխարինել էր խմբագրին, ապա այժմ Տեր-Մարկոսյանին թույլատրվում է ստորագրել միայն թերթի տարեվերջյան երկու համարները, որոնք նվիրված էին Արծրունու հիշատակին: Ավելին, Թիֆլիսի նահանգապետի կարգադրությամբ նա կալանվում է Արծրունու թաղման ժամանակ տեղի ունեցած «անկարգություններին մասնակից լինելու» պատճառաբանությամբ: «Մշակի» հրատարակությունը ընդհատվում է, և մոտ 10 ամիս ձգձգվում է նոր խմբագրի հաստատումը: Սա սովորական բյուրոկրատական քաշքշուկ էր. գրաքննության արխիվային փաստաթղթերը պարզում են իշխանությունների քաղաքական որոշակի նկատառումները: Արծրունու կտակով թերթի սեփականատերը դարձած նրա այրուն՝ Մարիամ Մելիք-Աղամալյանին, մերժվում է ժամանակավոր խմբագրի պաշտոնը, գրաքննության կոմիտեի «Ժանրակշիռ հիմնավորմամբ». «Մշակի» նման լայն ծրագրով թերթը դեկավարելու համար համապատասխան կրթության և գրական փորձի բացակայության հետ նշվում է նաև, որ կին-խմբագիրը կարող է հեշտությամբ ենթարկվել «ծայրահեղ ուղղության» անձանց ազդեցությանը²⁵:

Մերժվում է նաև Մելիք-Աղամալյանի միջնորդագիրը՝ Համբարձում Առաքելյանին խմբագիր հաստատելու վերաբերյալ: Կոմիտեի բացատրագիրը երկար է, հանգամանակից և, կարելի է ասել, պերճախոս. Արծրունու թերթի

²³ Տե՛ս նույն տեղում:

²⁴ Տե՛ս Центральный государственный исторический архив СССР, ф. 776, оп. 12-д. 71, л. 38—40, 48.

²⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 52—54:

անվիճելի արժանիքը և ժողովրդականությունը դիտելով հայ հասարակության այն մասի ձայնափողը լինելու մեջ, որը ձգտում էր հայ ժողովրդի վերածնությանը և լուսավորությանը՝ Ռուսաստանի աշակցությանը և հովանավորությանը, նախագահ Գալեյը ընդգծում է, որ նրա հրապարակախոսական վերաբերմամբ, նախագահ Գալեյը ընդգծում է, որ նրա հրապարակախոսական գործունեությունը միշտ եղել է «օրինական և չափավոր» ձևերի մեջ, որին միանգամայն խորթ էր ամեն կարգի արմատականությունը։ Նա նկատի ունի այն արմատական միտումները, որոնք հատուկ են «այսպես կոչված նա-րոդնիկների կուսակցությանը»։ Ցարական իշխանավորը Արծրունու հիշատակին նվիրված և գրաքննության կողմից կալանքի առնված հոգևածների մեջ, որոնք նախատեսված էին «Մշակում» և «Տարազում» տպագրելու համար, տեսնում է իրենց գործունեությունը լեգալացնելու այդ արմատականների փորձը, երբ «հանգուցյալ հրապարակախոսի հիշատակը հարգելու պատրվակի տակ» հայ մտավորականությանը կոչ է արվում «ազգային միավորման դրոշի ներքո հավաքվել»։ Ինչ վերաբերում է խմբագրի նոր թեկնածուին, ապա տեղեկացվում է, որ նա ևս, ինչպես և թերթի խմբագրության ամբողջ ապագա կազմը, մասնակցել է այդ հոգևածների պատրաստմանը։ Այստեղից բխեցվում է անվերապահ եզրակացություն. «Այսպիսով, կասկածի ենթակա չէ, որ այն ոգով և ուղղությամբ, որով տանում էր Արծրունին «Մշակ» թերթը, վերջնականապես դադարեցրել է իր գոյությունը և ներկայումս առաջ է գալիս նոր հայկական թերթի, նոր խմբագրով և հրատարակչով, հրատարակման խնդիր»։ Զ. Առաքելյանին «Մշակի» խմբագրի պաշտոնը մերժելու «համոզիչ» փաստարկ է ծառայում նաև այն վկայակոչումը, որ նա մասնակցել է Շուշիում «Գործ» շաբաթաթերթի հրատարակմանը։ «Թերթի հենց առաջին համարում հայտնաբերելով սոցիալիստական և վնասակար քաղաքական ուղղության մի շարք հոգևածներ, գրաքննության կոմիտեն բռնագրավեց թերթի այդ համարը և դրանից հետո դադարեցրեց հրատարակությունը»։ Դրանց թվում էր նաև Զ. Առաքելյանի «Հողատիրությունը և գույքային խնդիրները Անդրկովկասում» հոդվածը²⁶։

Ահա, վերջապես, Մեխի-Աղամալյանի դիմումը՝ Ալեքսանդր Քալանթարին «Մշակի» խմբագիր առաջադրելու վերաբերյալ. կից ներկայացվում են կենսագրությունը, հոգևածների, գեկուցումների, վարած պաշտոնների, կատարած աշխատանքների, շրջագայությունների ցուցակները²⁷։ Գրաքննության կոմիտեն 1893 թ. հուլիսի 13-ին դրական կարծիք է ուղարկում մամուլի գլխավոր վարչություն, հատուկ ընդգծելով Քալանթարի «պատկառելի համոզմունքները, որոնց խորթ են այսպես կոչված Երիտասարդ Հայաստանի արմատական հրապուրանքները»։ Հուլիսի 13-ին հայտնվում, որ նա թերթը կվարի «բարեհույս ուղղությամբ» և «ցանկալի ոգով»։ 1893 թ. հոկտեմբերի 2-ին Ալեքսանդր Քալանթարին տրվում է «Մշակի» խմբագրի վկայական²⁸։

Ամփոփենք. թերթի դիմագիծը բնորոշողը նրա հրապարակած նյութերն են։ Սակայն այդ դիմագիծը ամբողջական չի լինի առանց գրաքննության մերժած նյութերի քննության, որոնք ավելի սուր և խոստուն գծեր են ավելացնում ամեն մի օրգանի քաղաքական նկարագրին, միաժամանակ բնութագրելով նաև տվյալ պետական համակարգը, որի մեջ այն լույս է տեսնում։

ГАЗЕТА ГРИГОРА АРЦРУНИ «МШАК» И ЦЕНЗУРА (1872—1892)

Л. М. ГЕВОРКЯН

Р е з ю м е

Материалы, опубликованные за два десятилетия в газете Григора Арцруни «Мшак», свидетельствуют о том, что этот орган был

²⁶ Տճ՝ս նույն տեղում, ք. 66—70։

²⁷ Տճ՝ս նույն տեղում, ք. 82—92։

²⁸ Տճ՝ս նույն տեղում։

смелым, радикальным поборником армянского либерализма, объявившим борьбу с пережитками феодального уклада жизни в армянской действительности. Во второй половине 1880-х годов, когда после полуторогодичного перерыва было возобновлено издание газеты, она теряет прежнюю политическую остроту. Однако это было вызвано не только и не столько уступкой радикальных позиций редактора газеты, сколько усилением реакции во всех сферах жизни царской России, в том числе и в печати, которая подвергалась ужесточенной цензуре.

GRIGOR ARTSRUNI'S PAPER "MSHAK" AND CENSORSHIP
(1872—1892)

L. M. GEVORGIAN

S u m m a r y

Materials which were published during two decades, in Grigor Artsruni's paper "Mshak" testify, that this paper was a courageous, radical champion of Armenian liberalism, which declares a struggle with the survivals of feudal mode of life in the Armenian reality. In the second half of 1880-s, when after an interval of a year and a half the publication of the paper was renovated, it loses its previous political acuteness. Still it was caused not so much by the concession of radical positions of paper editor as by the efforts of reaction in all spheres of life of tsarist Russia, including also the press, which was subjected to a terrible censorship.